

**CONTRACT N 2.18**  
**ON GENERAL AND AVIATION ENGLISH**  
**LANGUAGE AND PROFESSIONAL REFRESHER**  
**TRAINING COURSES FOR ATC CONTROLLERS**  
**“ARMATS-MATsDzB-09/22”**

Yerevan  
“25” 09 2022

“ARMATS” CJSC, on behalf of the company General Director A.Gasparyan (hereinafter Customer), acting on the basis of “ARMATS” CJSC charter, on the one hand and “GATE Aviation Training” ApS, on behalf of Chief Operating Officer Mrs. Jana Hochmanova (hereinafter Provider), acting on the basis of Company charter, on the other hand, concluded the contract on the following:

**1. SUBJECT OF THE CONTRACT**

1.1 The Customer shall assign and the Provider shall assume responsibility to provide “Refresher Training Services for Employees” (General and Aviation English Language and Professional Refresher Training Courses for ATC Controllers) (hereinafter Service) according to Technical Characteristics-Procurement Schedule under Appendixes N1 and N1.1 hereof which is an integral part of the contract (hereinafter Contract).

1.2 The Service shall be provided in compliance with the Technical Characteristics-Procurement Schedule under Appendixes N1 and N1.1 hereof and within the defined period.

**2. RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES**

2.1 The Customer shall have the right to:

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2.18**  
**ՕԵԿ ԿԱՐԳԱՎԱՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ և**  
**ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶԿԻ և**  
**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ**  
**ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**  
**«ՀԱՆ-ՄԱԾՁԲ - 09/22»**

ք. Երևան  
«25» 09. 2022թ.

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր Տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գեյթ Էվիեյշն Թրեյնինգ>> ԷՅՖԻԷՍ-ը, ի դեմս Գործադիր Տնօրեն Տկն. Յանա Հոխմանովայի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է <<Աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների>> (ՕԵԿ կարգավարների ընդհանուր և ավիացիոն անգլերեն լեզվի և մասնագիտական վերապատրաստման դասընթացներ) մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N1 և N1.1 Հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N1 և N1.1 Հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

<p>2.1.1 Check the process and quality of the Service rendered by the Provider at any time without interfering with the activity of the Provider.</p> <p>2.1.2 If the Service has not been provided in compliance with the Technical Characteristics-Procurement Schedule under Appendixes N1 and N1.1 of the Contract:</p> <p>a) refuse to accept the Service by defining at his discretion a reasonable period for the replacement of the improper Service with Service complying with the Contract free of charge and require Provider to pay the fine under point 5.2 as well as the penalty under point 5.3 of the Contract.</p> <p>b) refuse to perform the Contract and require the Provider to return the amount paid for the Service and pay the fine under point 5.2 of the Contract.</p> <p>2.1.3 Unilaterally terminate the Contract if the Provider has substantially violated the Contract. Breach of the Contract by the Provider is significant if:</p> <p>a) the Service provided under the Contract does not meet the requirements set out in Appendixes N1 and N 1.1 of the Contract,</p> <p>b) the time limit of the Service provision has been violated.</p>	<p>2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:</p> <p>2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N1 և N1.1 Հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.</p> <p>ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման որջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.</p> <p>բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:</p> <p>2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝</p> <p>ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 և N1.1 Հավելվածներով սահմանված պահանջներին,</p> <p>բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:</p>
<p><b>2.2 The Customer shall be obliged to:</b></p> <p>2.2.1 Consider and accept the outcome of the Service complying with the Technical Characteristics-Procurement Schedule and if any discrepancies are discovered during the acceptance of the Service results, immediately notify the Provider about it in writing.</p> <p>2.2.2 If the outcome of the Service is accepted, pay the Provider the payable amounts and if the time limit is breached, also pay the penalty set out in point 5.5 of the Contract.</p>	<p><b>2.2 Պատվիրատուն պարտավոր է՝</b></p> <p>2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:</p> <p>2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:</p>

**2.3 The Provider shall have the right to:**

2.3.1. require the Customer to pay him the payable amounts and if the time limit, defined in point 4.2 of the Contract, is breached by the Customer also require the Customer to pay the penalty under point 5.5 of the Contract.

**2.4 The Provider shall be obliged to:**

2.4.1 provide the Service according to the terms and conditions under Appendixes N 1 and N1.1 of the Contract and the current legislation.

2.4.2 in the cases covered by the Contract pay the fine and penalty set out in points 5.2 and 5.3.

**3. DELIVERY AND ACCEPTANCE OF THE SERVICE**

3.1 The Customer and the Provider shall bilaterally sign a delivery-acceptance protocol on the outcome of the provided Service. The fact of delivering the outcome of the Service to the Customer shall be established by a mutually confirmed document with the indication of the date the document has been drawn up.

The Provider till and including the Service provision deadline date shall submit to the Customer the document certifying the actual delivery of the provided Service to the Customer (Appendix N 3.1) and a delivery-acceptance protocol (Appendix N 3) signed on his behalf. Moreover, the Provider shall approve the delivery-acceptance protocol completing only the relevant fields (the procedure for completing is set up in **Legislation • Finance Minister Orders section** at [www.procurement.am](http://www.procurement.am)).

3.2 If the provided Service complies with the Contract terms and conditions, the Customer shall sign and submit the delivery-acceptance protocol and the positive opinion on the Contract implementation results to the Provider within five working days following the receipt of the documents prescribed by point 3.1 of the Contract.

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N1 և N1.1 Հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը կնքում և ստորագրում է, լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-

3.3 If the provided Service or a part thereof does not comply with the Contract terms and conditions, the Customer shall not sign the delivery-acceptance protocol and return the protocol and the negative opinion on the contract implementation results to the Provider within the time limits prescribed by point 3.2 of the Contract. For applying the conditions provided for by this point the Customer shall take measures foreseen by the Contract for such cases to settle the issue and apply responsibility measures under the Contract towards the Provider.

3.4 If the Customer does not accept or does not refuse to accept the Contract result within the period defined by point 3.2 of the Contract, the result is considered as accepted.

#### 4. CONTRACT PRICE

4.1 The total price of the Contract Service rendered by the Provider is maximum 138 960 (one hundred thirty-eight thousand nine hundred sixty) Euros. The price per participant is 5 790 (five thousand seven hundred ninety) Euros.

The price includes all the expenses incurred by the Provider, as well as the taxes, duties and other mandatory payments according to the RA legislation.

The Service provision price is fixed and the Provider shall not have the right to require to increase and the Customer shall not have the right to require to reduce the price.

The Contract is concluded for the year of 2022.

4.2 The Customer shall make a noncash payment in Euros for the provided Service through transferring the financial resources to the Provider's account number. The transfer of the financial resources shall be carried out based on the completed and signed delivery-acceptance protocol in the amount and months defined by the payment schedule (under Appendix N 2) of the Contract, but not later than 10 days.

#### 5. RESPONSIBILITIES OF THE PARTIES

ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված:

#### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի կողմից մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է առավելագույնը 138 960 (մեկ հարյուր երեսունութ հազար ինը հարյուր վաթսուն) եվրո: Մեկ մասնակցի համար գինը կազմում է 5 790 (հինգ հազար յոթ հարյուր ինսուն) եվրո:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Սույն Պայմանագիրը կնքվում է 2022թ-ի համար:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է եվրոյով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է լրացված և կնքված հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N2) նախատեսված չափերով և ամիսներին, բայց ոչ ուշ քան 10 օր:

#### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 The Provider bears responsibility for the Service provision according to the Contract requirements.

5.2 For each case if the Service is not provided in compliance with the Technical Characteristics under Appendixes N 1 and N1.1 of the Contract, the Provider shall pay fine amounting to 0,5%(zero-point-five percent) of the price mentioned in point 4.1 of the Contract. Moreover, the penalty shall also be calculated for each case when the Service is provided within the time limit set by this Contract, but not accepted by the Customer.

5.3 If the Service provision period under the Contract is breached, for each delayed day the Provider shall pay penalty amounting to 0,05% (zero-point-zero-five percent) of the Service price calculated towards the price of non-performed part of the Service.

5.4 The penalties and fines defined in points 5.2 and 5.3 of the Contract are calculated and deducted from the sums payable to the Provider in the result of the Service provision.

5.5 If the Customer breaches the time limit under point 4.2 of the Contract, the Customer shall pay a penalty calculated for each day of the delay, however, in the amount of 0,05% (zero-point-zero-five percent) of the unpaid amount.

5.6 In the cases not covered by the Contract if the Parties fail to perform or properly perform their obligations, they bear responsibility in the order determined by the RA legislation.

5.7 The payment of penalties and (or) fines does not release the Parties from the full performance of their contractual obligations.

## 6. FORCE MAJEURE

The Parties are exempted from liability for the full or partial non-performance of their obligations under this Contract or Agreements signed on the basis of the

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Պայմանագրի պահանջներին համապատասխան Ծառայության մատուցման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 Հավելվածներում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 % (զրո ամբողջ հինգ տասնորդական տոկոսի) չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական տոկոսի) չափով:

5.4 Պայմանագրի 5.2-րդ և 5.3-րդ կետերով սահմանված տույժերն ու տուգանքները հաշվարկվում և հանվում են Ծառայության մատուցման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական տոկոսի) չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար

Contract if it happens due to a force majeure which occurs after the Contract signature and which the Parties could not predict or prevent.

Such events are earthquakes, floods, fires, war, announcement of military and emergency situations, political unrest, strikes, communication failures, acts of government bodies, pandemics, etc., that lead to non-fulfillment of their obligations under this Contract.

If force-majeure endures more than 3 (three) months, either Party shall have the right to terminate the Contract informing the other Party about it in advance.

## 7. MISCELLANEOUS

7.1 This Contract enters into force from the moment of its signature by the Parties and is valid until the Parties have completely fulfilled their contractual obligations.

7.2 The payment liability of the Party arising from the Contract cannot be terminated by offsetting a counter liability arising from other contract without the written and sealed agreement of the Parties. The right of claim arisen from the Contract cannot be transferred to other entity without the written consent of the debtor Party.

7.3 If in the result of a control or supervision or complaints review, carried out in the order foreseen by the Law directed to the fulfilment of the legislation requirements, it is registered that during the procurement process, before the Contract conclusion, the Provider has submitted falsified documents (information and data) or the decision about the Provider as a selected bidder does not comply with the legislation of the Republic of Armenia, after the discovery of such data the Customer shall have the right to terminate the Contract unilaterally, if the registered infringements, discovered before the Contract conclusion, according to the procurement legislation of the Republic of Armenia would have become a basis for not concluding the Contract. In addition, the Customer does not bear any risk of the Provider's losses or lost benefit due to the unilateral termination of the Contract and the Provider shall compensate for

Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, համավարակները և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով

the Customer's losses occurred through the Provider's fault according to the procedure defined by the legislation of the Republic of Armenia and to the extent in respect of which the Contract has been terminated. In case the Contract is terminated for the reason that the Customer did not comply with the legislation of RA, the Customer will compensate losses or lost benefit to the Provider in case the Contract is terminated less than 1 month prior to the Service delivery.

7.4 All the disputes arising from the Contract shall be subject to examination in the courts of the Republic of Armenia.

7.5 Any additions and amendments to the Contract can be made only by the mutual consent of the Parties by signing an agreement, which will become an integral part of the Contract.

It is prohibited to make such amendments in the Contract, and if the Contract price is factor based, in each subsequent agreement attached to the Contract, which will lead to the artificial change of the procurement Service scope or Service unit price or Contract price.

The government of the Republic of Armenia determines the cases when the Contract is amended owing to the influence of the factors beyond the control of the Contract Parties.

7.6 The Service provision period may be extended before the expiry of the deadline if there is a proposal by the Provider, on condition that the Customer still has the need for the procurement subject and the Provider has submitted the proposal no later than at least 5 calendar days prior to the expiration of the contractual period of Service provision. However, the Service provision period may be extended once and for up to 30 calendar days, but no longer than the time limit defined by the Contract.

7.7 If the Contract is implemented properly, the benefits (savings) or the losses of the Parties (Provider or Customer) are the benefit or loss of that Party.

The obligations of the Contract Parties towards the third entities including other contracts signed by the Provider within the frame of the Contract implementation and the liabilities arising from them are out of the Contract regulation framework and cannot have an influence on the acceptance of the Contract implementation result. The relations related to the implementation of such contracts and the obligations

փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

Այն դեպքում, երբ Պայմանագիրը լուծվում է Պատվիրատուի կողմից «Օրենսդրությանը չհամապատասխանելու պատճառով, Պատվիրատուն կփոխհատուցի վնասները կամ կորցրած օգուտը Կատարողին, եթե Պայմանագիրը լուծարվի Ծառայության մատուցումից ավելի պակաս քան 1 ամիս առաջ ժամկետում:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Ազելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայության մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների

arising from them are regulated by the norms related to the regulation of such contracts relations and the Provider bears responsibility for them.

7.8 This Contract may not be amended due to the partial non fulfillment of the obligations by the Parties or completely terminated by the mutual consent of the Parties, with the exception of cases when the allocated financial resources are reduced, necessary for the procurement of the subject matter hereof, according to the procedure defined by the legislation of the Republic of Armenia. In addition, the mutual consent of the Parties for the partial non fulfillment of the obligations or complete termination thereof is necessary to obtain before the reduction of the financial resources necessary for that procurement according to the procedure defined by the legislation of the Republic of Armenia.

7.9 If the Provider fails to fulfill or improperly fulfills the Contract obligations, the Customer shall publish a notification about the unilateral termination of the Contract or any part thereof in "Notifications on unilateral termination of contracts" section at [www.procurement.am](http://www.procurement.am) indicating the publication date. The Provider shall be considered to be duly notified of the unilateral termination of the Contract on the day following the day of publication of the notification as prescribed by this point. The Customer shall also notify the Provider by e-mail of the unilateral termination of the Contract or any part thereof on the day of publication of the notification in the bulletin.

7.10 All the disputes arising from the Contract are settled through negotiations. In case of failing to reach an agreement, the disputes are settled in the RA courts.

7.11 The Contract is comprised of 9 pages and is concluded in two copies which have equal legal force. Appendixes N1, N 1.1, N2, N3 and N3.1 attached to the Contract are an integral part of the Contract, each Party will be given one copy of the Contract.

7.12 The Contract is subject to the law of the Republic of Armenia.

հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սույն գնման առարկայի համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման համար Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն Պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N1, N1.1, N2, N3 և N3.1 Հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով

7.13 The Service under the Contract shall be provided if financial resources are earmarked and based on which a relevant agreement is signed between the Parties. The Contract shall be rescinded if financial resources are not allocated for the performance of the Contract within six months following the day of the Contract conclusion.

Ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա Կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

**8 . Legal addresses, bank requisites and signatures of the Parties**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**CUSTOMER ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

“ARMATS” CJSC  
RA, Yerevan-0042, I. Gasparyan 33  
Taxpayer identification number 01216144  
A/N 1930000346890104 “Converse bank” CJSC

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ  
ՀՀ, ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33,  
ՀՎՀՀ՝ 01216144,  
h/h 1930000346890104, «Կոնսվերս բանկ» ՓԲԸ

**PROVIDER ԿԱՏԱՐՈՂ**

“GATE Aviation Training“ ApS  
incorporated and registered in Denmark  
Company number 39090562  
Registered office: Petersdalvej 1A, 3. Sal  
2770 Kastrup, Denmark  
Account Number: 53039662561  
with Arbejdernes Landsbank  
Vesterbrogade 5 - 1502 Copenhagen V  
IBAN: DK7853030009662561  
SWIFT: ALBADKKK

**CUSTOMER**  
Artur Gasparyan  
General Director  
“ARMATS” CJSC

Signature/  
ստորագրություն  
Stamp / Կ.Տ.



**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**  
Արթուր Գասպարյան  
Գլխավոր Տնօրեն  
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ

**PROVIDER**  
Jana Hochmanova  
Chief Operations Officer  
“GATE Aviation Training”  
ApS

Signature/  
ստորագրություն  
Stamp / Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**  
Յանա Հոխմանովա  
Գործադիր Տնօրեն  
«Գեյթ Էվիեյշն Թրեյնինգ» ԷՅփիԷՍ

Հավելված N 1  
 «25» 02.18 2022 թ. կնքված  
 Պայմանագրի  
 Appendix N 1  
 To Contract  
 signed on «25» 02. 2022

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՍՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՈՒՅՑ  
 TECHNICAL CHARACTERISTICS-PROCUREMENT SCHEDULE


Ծառայության Service		Մատուցման Provision		Եվրո/EURO			
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը Number of the lot provided by the invitation	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳԱՍՈ հաստատված ընդհանուր դասակարգման (CPV) Code indicated in the procurement plan according to CPV classification	Տեխնիկական բնութագիրը Technical characteristics	Չափման միավորը Measurement unit	Ընդհանուր գինը/Եվրո Total price (in euro)	Ընդհանուր քանակը Total volume	Հասցեն Address	Ժամկետը** Period**
1	79631200/8	տես Հավելված N 1.1 see Appendix N 1.1	Եվրո/Euro	Մասնագրություն/Maximum 138 960	1	Petersdalvej 1A, 3. Sal 2770 Kastrup, Denmark	2022թ./year

Եթե Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա այնուհետև ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսված ռեսուրս կործնելի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:  
 If the Contract is signed on the basis of part 6 of Article 15 of the RA Law on Procurement, the calculation of the period shall be made if financial resources are allocated and starting from the date an agreement signed between the parties enters into force.

**CUSTOMER**  
 Artur Gasparyan  
 General Director  
 «ARMATS» CJSC

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**  
 Արթուր Գասպարյան  
 Գլխավոր տնօրեն  
 «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ


Ստորագրություն  
 Stamp / Կ.Տ.



**PROVIDER**  
 Jana Hochmanova  
 Chief Operations Officer  
 «GATE Aviation Training» ApS

**ԿԱՏԱՐՈՂ**  
 Յանա Հոխմանովա  
 Գործադիր Տնօրեն  
 «Գեյթ Էվիեյն Թրեյնինգ» ԷՅՖԻԷՍ

Ստորագրություն  
 Stamp / Կ.Տ.



«25» 02 2022թ. կնքված  
 2.18 Պայմանագրի  
 Appendix N 1.1  
 To Contract  
 2.18 signed on 25.02. 2022

Technical Characteristics	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
<p>The subject of procurement is the provision of Refresher Training Courses for employees, which includes the organization and provision of General and Aviation English Language Training with final assessment and Professional Refresher Training Courses for ATC Controllers for the licensed air traffic controllers with ADI/TWR, APS, ACS ratings in an aviation training centre complying with the Eurocontrol ATC training and ICAO training standards and recommended practices.</p> <p><b>1.1 Technical Specifications</b>            1.1.1 The training course shall be organized for three (3) weeks (90 lessons) per each group and contain the following:</p> <p><b>First (1<sup>st</sup>) week and Second(2<sup>nd</sup>) week</b>            Theoretical ATC Refresher Training combined with Simulator Training - ATCO's training for handling emergency and unusual situations</p> <p><b>Third (3<sup>rd</sup>) week</b>            General and Aviation English Language Refresher Training with final assessment</p>	<p>Գնման առարկան աշխատակիցների վերապատրաստման դասընթացներն են, որոնք ներառում են Եվրակոնտրոլի ՕԵԿ վերապատրաստման և ԻԿԱՕ-ի վարժանքի միջազգային չափորոշիչներին և առաջարկվող գործելաձևերին համապատասխանող ավիացիոն ուսումնական կենտրոնում օդային երթևեկության կառավարման ADI/TWR, APS, ACS որակավորման գործող վկայական ունեցող կարգավարների համար Ընդհանուր և ավիացիոն անգլերեն լեզվի, ավարտական գնահատումով, վերապատրաստման և մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպումն ու իրականացումը:</p> <p><b>1.1 Տեխնիկական հատկանիշներ</b>            1.1.1 Վերապատրաստման դասընթացը պետք է կազմակերպվի երեք (3) շաբաթ տևողությամբ (90 դասաժամ) յուրաքանչյուր խմբի համար և պարունակի հետևյալը.</p> <p><b>Առաջին (1-ին) շաբաթ և երկրորդ (2-րդ) շաբաթ</b>            ՕԵԿ մասնագիտական վերապատրաստման տեսական պարապմունքներ վարժասարքային վարժանքի հետ միասին - ՕԵԿ կարգավարների պարապմունքներ վթարային և արտասովոր իրավիճակներում</p> <p><b>Երրորդ (3-րդ) շաբաթ</b>            Ընդհանուր և ավիացիոն անգլերեն լեզվի վերապատրաստում ավարտական գնահատումով</p>

<p>1.1.2 The Provider shall also provide the following for the course participants:</p> <ul style="list-style-type: none"> <li>- accommodation,</li> <li>- local transportation (free tickets or alternative way of free transportation),</li> <li>- transfers (from and to the airport),</li> <li>- social programme.</li> </ul> <p>1.1.3 The training shall be provided for the Customer's minimum of 20 and maximum of 24 participants.</p> <p>1.1.4 The course shall be organized for 2 or 3 groups of minimum 8 and maximum of 12 participants. There will be ADI/TWR and APP/ACC controllers in each group.</p> <p>1.1.5 The training shall be provided in English language.</p> <p>1.1.6 The course shall support and reinforce the ATCO's general and aviation English language knowledge and skills for handling of both routine traffic flow as well as unusual and emergency situations. The course shall be conducted in accordance with EUROCONTROL recommendations and ICAO standards and recommended practices. The course shall cover theoretical and practical training.</p> <p>1.1.7. Each course shall contain the following topics:</p> <p><b>First (1<sup>st</sup>) week and Second(2<sup>nd</sup>) week ATC Refresher Theoretical Training combined with simulation</b></p> <p>1.1.7.1 <b>Theoretical training topics:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>▪ ATS rules and regulations</li> <li>▪ Air traffic control equipment - principles, use and functional capabilities</li> </ul>	<p>1.1.2 Վերապատրաստման դասընթացի կազմակերպողը մասնակիցների համար պետք է ապահովի նաև՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- կացարան,</li> <li>- քաղաքային տրանսպորտից օգտվելու հնարավորություն (անվճար կտրոնների տրամադրում կամ անվճար փոխադրման այլընտրանքային տարբերակ),</li> <li>- փոխադրումներ (օդանավակայանից և դեպի օդանավակայան),</li> <li>- մշակութային ծրագիր:</li> </ul> <p>1.1.3 Պատվիրատուի մասնագետներից վերապատրաստում պետք է անցնեն նվազագույնը 20 և առավելագույնը 24 մասնակիցներ:</p> <p>1.1.4 Դասընթացը պետք է կազմակերպվի 2 կամ 3 խմբի համար՝ նվազագույնը 8 և առավելագույնը 12 մասնակիցներից բաղկացած: Յուրաքանչյուր խումբ կազմավորվում է ADI/TWR և APP/ACC կարգավարներից:</p> <p>1.1.5 Վերապատրաստումը պետք է իրականացվի անգլերեն լեզվով:</p> <p>1.1.6 Դասընթացը պետք է ամրապնդի ՕԵԿ կարգավարների ընդհանուր և ավիացիոն անգլերեն լեզվի գիտելիքներն ու հմտությունները ինչպես օդային երթևեկությունը կառավարելու ընթացիկ աշխատանքային պայմաններում, այնպես էլ արտասովոր և վթարային իրավիճակներում: Դասընթացը պետք է իրականացվի Եվրոկոնտրոլի և ԻԿԱՕ-ի չափորոշիչների և առաջարկվող գործելաձևերի համաձայն: Այն պետք է ընդգրկի տեսական պարապմունքներ և գործնական վարժանքներ:</p> <p>1.1.7. Յուրաքանչյուր դասընթաց պարտադիր պետք է ընդգրկի հետևյալ թեմաները.</p> <p><b>Առաջին (1-ին) շաբաթ և երկրորդ (2-րդ) շաբաթ ՕԵԿ մասնագիտական վերապատրաստման տեսական պարապմունքներ վարժասարքային վարժանքի հետ միասին</b></p> <p>1.1.7.1. <b>Տեսական պարապմունքների թեմաներ՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- ՕԵԿ կարգավարներին առնչվող կանոններ և կանոնակարգեր,</li> <li>- ՕԵԿ սարքավորումներ՝ սկզբունքները, շահագործումը և սահմանափակումները:</li> </ul>
---	--

- General knowledge - principles of flight, aircraft, systems, performance
- Human factor
- Meteorology – weather phenomena characteristics, weather information, meteorological services
- Air navigation – basic rules, and specifications of air navigation systems
- Airspace Management
- Provision of Air Traffic Services by Tower, Approach and Area Radar Control
- Altimeter Setting Procedures
- ATC Clearances
- Use of ATS surveillance systems
- Radar vectoring
- PBN concept (Performance-Based Navigation) specifications
- RNAV (area navigation) system functional capabilities and specifications
- ATC procedures
- RNP approaches
- ICAO phraseology

- Ընդհանուր գիտելիքներ՝ թռիչքի հիմնական կանոններ, ինքնաթիռ, համակարգեր, բնութագիր,
- Մարդկային գործոն,
- Օդերևութաբանություն՝ եղանակային երևույթների բնութագրեր/ հատկանիշներ, եղանակի տեղեկատվություն, օդերևութաբանական ծառայություններ,
- Օդազնացություն՝ հիմնական կանոններ, օդազնացության համակարգերի տեխնիկական բնութագրեր,
- Օդային տարածքի կազմակերպում,
- Օդային երթևեկության սպասարկման ապահովում Աերոդրոմային, Մոտեցման և Շրջանային ռադարային կառավարման միջոցով,
- Բարձրաչափի համալարման ընթացակարգեր,
- ՕԵԿ թույլտվություններ,
- ՕԵՍ դիտարկման համակարգերի օգտագործում,
- Ուղղորդում,
- PBN կոնցեպցիա (բնութագրերի վրա հիմնված նավիգացիա),
- RNAV (շրջանային նավիգացիա) համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունները և տեխնիկական բնութագրերը
- ՕԵԿ ընթացակարգեր,
- RNP մոտեցումներ
- ԻԿԱՕ դարձվածաբանություն

**Unusual/emergency situations:**

- ICAO Standard and Non-standard Phraseology
- Call Sign Confusion
- Blocked Transmission
- Bird Strike
- Unlawful Interference
- Bomb Warning
- Brake Problems
- Fuel Problems
- Depressurization
- Icing
- Hydraulic Problems
- Smoke or Fire in the Cockpit
- Communication Failure

**Արտասովոր և վթարային իրավիճակներ՝**

- ԻԿԱՕ ստանդարտ և ոչ-ստանդարտ դարձվածաբանություն,
- Ազդակոչի շփոթում,
- Արգելափակված հաղորդում
- Թռչնի հարված,
- Անօրինական միջամտություն,
- Ռումբի մասին նախազգուշացում,
- Արգելակների հետ կապված խնդիրներ,
- Վառելիքի հետ կապված խնդիրներ,
- Ճնշման կորուստ,
- Սառցապատում,
- Հիդրավլիկ համակարգի հետ կապված պրոբլեմներ,
- Ծուխ կամ հրդեհ թռիչքային խցիկում,
- Կապի խափանում:

**1.1.7.1.2 Practical training topics:**

- Radar vectoring (arriving and departing traffic)
- Radar vectoring (sequencing, separation)
- Bird Strike
- Unlawful Interference

**1.1.7.1.2 Գործնական պարապմունքների թեմաներ՝**

- Ուղղորդում (ժամանող և մեկնող երթևեկություն),
- Ուղղորդում (հաջորդականություն, տարանջատում),
- Թռչնի հարված,
- Անօրինական միջամտություն,

- Bomb Warning
- Brake Problems
- Fuel Problems
- Depressurization
- Icing
- Hydraulic Problems
- Smoke or Fire in the Cockpit
- Communication Failure
- GNSS Approach and Landing
- GNSS Approach and Landing during Communication Failure

- Ռումբի մասին նախազգուշացում,
- Արգելակների հետ կապված պրոբլեմներ,
- Վառելիքի հետ կապված խնդիրներ,
- Ճնշման կորուստ,
- Սառցապատում,
- Հիդրավլիկ համակարգի հետ կապված խնդիրներ,
- Ծուխ կամ հրդեհ թռիչքային խցիկում,
- Կապի խափանում,
- Մոտեցում և վայրէջք GNSS համակարգով,
- Մոտեցում և վայրէջք GNSS համակարգով կապի խափանման ժամանակ:

**Third (3<sup>rd</sup>) week  
General and Aviation English Language  
Refresher Training with final assessment**

**Երրորդ (3-րդ) շաբաթ  
Ընդհանուր և ավիացիոն անգլերեն լեզվի  
վերապատրաստում ավարտական գնահատումով**

1.1.8 Practical training shall be carried out on TWR, APP and ACC simulator positions. The duration of each simulation exercise shall be approximately 35 minutes plus the time for briefings.

1.1.8 Գործնական վարժանքը անց է կացվում վարժասարքի ԱԿԿ, ՄԿԿ և ՇԿԿ աշխատանքային տեղերի վրա: Վարժասարքի յուրաքանչյուր վարժության տևողությունը պետք է լինի մոտավորապես 35 րոպե՝ գումարած ճեպագրույցները:

1.1.8.1 The simulator has to meet the following standards:

1.1.8.1 Վարժասարքը պետք է բավարարի հետևյալ նորմերը՝

- Radar SIM:

- Ռադարային կառավարման վարժանք Վարժասարքային համակարգը պետք է բավարարի վարժությունների կատարում ACC-ում և APP-ում, ստեղծելով անկախ, ամբողջական, իրականին շատ մոտ ՕԵԿ իրավիճակների դեպքեր վարժասարքային օդային տարածքում:

The simulator system shall allow for performing APP and ACC exercises creating an independent, complete, virtual ATC situation scenario within the simulation airspace.

Համակարգը պետք է թույլատրի յուրաքանչյուր վարժության կրկնություն որևէ որոշակի պահից: Պետք է լինի հնարավորություն ընդհատելու վարժությունը և հետո նորից շարունակելու այն:

The system shall allow for replaying of each exercise from a specified moment. It shall be possible to intermittently stop an exercise and then continue again.

1.1.8.2 TWR SIM:

1.1.8.2 Աերողրոմային կառավարման վարժանք

The system shall represent a 360° three-dimensional projection (3D) Out-the-Window view of the airfield environment.

Համակարգը պետք է ներկայացնի 360° պրոեկցիոն եռաչափ (3D) լուսամուտից տեսանելի թռիչքային դաշտի միջավայր: Վարժասարքի պարապմունքը պետք է հնարավոր դարձնի տարբեր տեսակի ինքնաթիռների, մեքենաների մոդելների և եղանակային պայմանների իրականին մոտ աշխատանքը:

The simulation training shall enable realistic performance of various types of aircraft, vehicle models and weather conditions.

<p>1.2 All training materials shall be in English.</p> <p>1.3 The trainees shall submit Certificates on course completion to the Company.</p> <p>2. The Contract shall be signed for 2022 year. The date of implementation will be determined by mutual agreement.</p>	<p>1.2 Բոլոր նյութերը պետք է լինեն անգլերեն լեզվով:</p> <p>1.3 Դասընթացի մասնակիցները Ընկերությանը պետք է ներկայացնեն ավարտական վկայականներ:</p> <p>2. Պայմանագիրը կնքվում է 2022թվականի համար: Իրականացման ամսաթիվը կսահմանվի փոխադարձ համաձայնությամբ:</p>
--	--



**CUSTOMER**  
**Artur Gasparyan**  
**General Director**  
**“ARMATS” CJSC**

Signature / ստորագրություն  
Stamp / Կ.Տ.

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**  
**Արթուր Գասպարյան**  
**Գլխավոր Տնօրեն**  
**«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ**

**PROVIDER**  
**Jana Hochmanova**  
**Chief Operations Officer**  
**"GATE Aviation Training" ApS**

Signature / ստորագրություն  
Stamp / Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**  
**Յանա Հոխմանովա**  
**Գործադիր Տնօրեն**  
**«Գեյթ Էվիեյշն Թրեյնինգ» ԷՅՖԻԷՍ**

Հավելված N 2  
 2022թ. կնքված  
 «25» 02 2022 թ. հ. 18  
 Պայմանագրի  
 Appendix N 2  
 To Contract  
 2.18 signed on 25. 02. 2022

Ք. Երևան  
 Yerevan

Վճարման Ժամանակացույց 2022  
 PAYMENT SCHEDULE 2022

In Euros/Եվրո

N	Ճառայության անվանումը Name of the service	Նախատեսված է ֆինանսավորել 2022թ. ըստ ամիսների՝ ընդ որում Financial resources are allocated in 2022 according to months, in which												Ընդամեն ը Sum/Total for the year
		Հունվար/ January	Փետրվար/ February	Մարտ/ March	Ապրիլ/ April	Մայիս/ May	Հունիս/ June	Հուլիս/ July	Օգոստոս/ August	Սեպտեմբեր/ September	Հոկտեմբեր/ October	Նոյեմբեր/ November	Դեկտեմբեր/ December	
1	Աշխատակիցների կենտրոնական Ծառայություններ Refresher Training Services for Employees			փաստացի actually	փաստացի actually	փաստացի actually	փաստացի actually	փաստացի actually	փաստացի actually	փաստացի actually	փաստացի actually	փաստացի actually	փաստացի actually	138 960

Վճարման ենթակա գումարները ներկայացված են անոմալիան չտարածելով  
 All the payable amounts are presented on a cumulative basis.

<p><b>ՀՍԱՏՐԱՍՏՈՒ</b>                  Արթուր Գասպարյան                  Գլխավոր Տնօրեն                  &lt;&lt;&lt;Հայաերևմտափոփոխ&gt;&gt; ՓԲԸ</p>	<p><b>CUSTOMER</b>                  Artur Gasparyan                  General Director                  "ARMATS" CJSC</p>
<p>ստորագրություն / Signature                  Կ.Տ./ Stamp</p>	<p><b>PROVIDER</b>                  Jana Hochmanova                  Chief Operations Officer                  "GATE Aviation Training" ApS</p>
<p><b>ՀՍԱՏՐԱՍՏ</b>                  Յանա Հոչմանովա                  Գործադիր Տնօրեն                  «Գեյթ Էվիեյշն Թրեյնինգ» ԷՖԿԻԷՍ</p>	<p>ստորագրություն / Signature                  Կ.Տ./ Stamp</p>

Հավելված N 3  
 «25» 02 2022թ. կնքված  
 Պայմանագրի  
 Appendix N 3  
 To Contract  
 2022  
 2.13 signed on «25» 02

<p>Պայմանագրի կողմ          Գտնվելու վայրը -          հհ -          Խ՛ԽԻ -</p>	<p>Պատվիրատու          Գտնվելու վայրը -          հհ -          Խ՛ԽԻ -</p>
<p>Պայմանագրի կողմ          Գտնվելու վայրը -          հհ -          Խ՛ԽԻ -</p>	<p>Պատվիրատու          Գտնվելու վայրը -          հհ -          Խ՛ԽԻ -</p>
<p>Պայմանագրի կողմ          Գտնվելու վայրը -          հհ -          Խ՛ԽԻ -</p>	<p>Պատվիրատու          Գտնվելու վայրը -          հհ -          Խ՛ԽԻ -</p>

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՐ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
 ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ  
 «\_\_\_» «\_\_\_» 2022թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝  
 «\_\_\_» «\_\_\_» «\_\_\_» «\_\_\_» 2022թ.

Պայմանագրի կնքման անսաթիվը՝ «\_\_\_» «\_\_\_» «\_\_\_» 2022թ.  
 Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_  
 Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի  
 կատարման վերաբերյալ «\_\_\_» «\_\_\_» 2022 թ. դրությամբ գրված  
 N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը  
 հետևյալի մասին.  
 Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ  
 ծառայությունները

Contract party  
 Address:  
 A/N:  
 Taxpayer Identification number:

Customer  
 Address:  
 A/N:  
 Taxpayer Identification number:

PROTOCOL N  
 ON THE DELIVERY-ACCEPTANCE  
 OF THE CONTRACT IMPLEMENTATION RESULTS OR A PART THEREOF

“\_\_\_” “\_\_\_” 2022 .

Name of the Contract (hereinafter Contract):  
 Contract signature date: “\_\_\_” “\_\_\_” “\_\_\_” 2022  
 Contract number: \_\_\_\_\_

The Customer and the Contract Party based on invoice N----- issued  
 on the Contract performance on “-----” “-----” 2022 drew up this  
 protocol on the following.

The Contract Party provided the following services within the  
 framework of the Contract:

		Provided Services		Մատուցված ծառայությունների		Payment period (according to Contract Payment Schedule) Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
N Անվանումը	Brief description of the Technical Characteristics տեխնիկական բնութագրի համառոտ չարադրանքը	Quantity Indicator քանակական ցուցանիշը		Provision period կատարման ժամկետը		
		According to Contract Procurement Schedule ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Actual փաստացի	According to Contract Procurement Schedule ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Actual փաստացի	Payable sum (Euro) Վճարման ենթակա գումարը /Եվրո/

The invoice and the positive opinion, based on which the mentioned protocol has been approved bilaterally, shall be an integral part of the protocol and attached thereto.  
 Սույն արձանագրության երկրորդ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

The Service is delivered by  
 Ծառայությունը հանձնեց

\_\_\_\_\_  
 signature / ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 name, surname / անուն, ազգանուն  
 St. Y.S.

The Service is accepted by  
 Ծառայությունն ընդունեց

\_\_\_\_\_  
 signature / ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 name, surname / անուն, ազգանուն  
 St. Y.S.

Հավելված 3.1  
2022թ. կնքված  
Պայմանագրի

<<25> 02 2022

2.18 Պայմանագրի

ԱԿՏ N 1

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Մոյնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_ (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_ (այսուհետ՝ Պատվիրատուի փոխարինողը) 2022թ. \_\_\_\_\_ ին կնքված N \_\_\_\_\_ պայմանագրի շրջանակներում համապատասխան ծախսերի կատարումը հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծախսերը:

Ծախսության		
Անվանումը	Քանակական հոլանիշը (կատարացի)	Չափի միավոր

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց  
Delivered by

անուն ազգանուն name surname

ստորագրություն/ signature

ԿՈՂՄԵՐԸ  
PARTIES

Ընդունեց  
Accepted by

Հայտը նախագծած ներկայացուցիչ  
Bid Projecting Representative

անուն ազգանուն name surname

ստորագրություն/ signature

Appendix 3.1  
to the Contract  
signed on 25.02.2022

DOCUMENT N 1  
CERTIFYING THE ACTUAL DELIVERY OF THE CONTRACT RESULT TO THE  
CUSTOMER

This is to certify that within the framework of the procurement Contract N \_\_\_\_\_ signed on \_\_\_\_\_ 2022 between \_\_\_\_\_ (hereinafter Customer) and \_\_\_\_\_ (hereinafter Provider), the Provider has delivered the below-mentioned Service to the Customer on \_\_\_\_\_, 2022 for the purpose of delivery and acceptance.

Service		
Name	Quantity Indicator (actual)	Measurement Unit

This document is drawn up in 2 copies, each Party will be given one copy.